ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE19-AD17-4CF6-8864 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/11628/02/25

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.11.2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «Ուրբան Դեվելթփմենթ» ՍՊԸ-ի, «Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվորներ) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ թիվ «ՋԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2025 թվականի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի միջնորդությունը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորների ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի՝ թիվ «ՋԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2025 թվականի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 29.10.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/11628/02/25 քաղաքացիական գործն, որը **30.10.2025 թվականին մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին, իսկ հասանելի է դարձել **31.10.2025 թվականին**:

Դատարանի 03.11.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 03.11.2025 թվականի որոշմամբ Հայցվորների ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ, բավարարվել է մասնակի:

Դատարանի 12.11.2025 թվականի որոշմամբ հրավիրվել է դատական նիստ՝ 09.12.2025 թվականին, ժամը 13:30-ին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից 13.11.2025 թվականին ներկայացվել է միջնորդություն՝ թիվ ԵԴ2/11628/02/25 քաղաքացիական գործով գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին՝ հայտնելով, որ *Ջրային կոմիտեի կողմից հայտարարված «Ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված շինարարական աշխատանքների ձեռքբերման» «ՋԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով հրատապ բաց մրցույթով (այսուհետ՝ **Մրցույթ**) նախատեսվել է 13 չափաբաժին, որոնցով հրատապ կապիտալ շինարարական աշխատանքներ պետք է իրականացվեն հիմնականում Երևան քաղաքի և մի շարք մարզերի խոշոր բնակավայրերի խիստ մաշված և քայքայված, հաճախակի վթարվող (ըստ էության ծառայության ժամկետը վաղուց անցած) ջրամատակարարման ցանցերի խողովակաշարերը: Այդ խողովակաշարերով նշված բնակավայրերի բնակչությունը, ինչպես նաև հասարակական և առևտրային օբյեկտների սպառողները ստանում են խմելու ջրի մատակարարման ծառայություններ, որոնք, անշուշտ, ունեն հանրային խիստ կենսական նշանակություն: Հաճախակի տեղի ունեցող վթարներից խիստ ընկնում է մեր ազգաբնակչությանը մատուցվող ծառայության մակարդակը, այդ թվում նաև մատակարարվող ջրի որակը, քանի որ հաճախակի անջատումների պատճառով հնարավոր է գրունտային ջրերի, այդ թվում նաև կեղտաջրերի ներթափանցումը դեպի խողովակաշար: Հաշվի առնելով Ջրային կոմիտեի կողմից նախատեսվող աշխատանքների կարևորությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական բյուջեից տրամադրել է աննախադեպ խոշոր գումար՝ ավելի քան 4.600.000.000 (չորս միլիարդ վեց*

հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Ներկայումս շինարարական աշխատանքների մեկնարկման փուլում են գտնվում 10 չափաբաժիններով նախատեսված աշխատանքները, իսկ 2-րդ չափաբաժնով (Նուբարաշեն թաղամասի ջրամատակարարման II գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և գոտիավորման աշխատանքներ), 3-րդ չափաբաժնով (Նուբարաշեն թաղամասի ջրամատակարարման III գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և գոտիավորման աշխատանքներ) և 4-րդ չափաբաժնով (Նուբարաշեն թաղամասի ջրամատակարարման IV գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և գոտիավորման աշխատանքներ) նախատեսված հատվածներում ապրող ազգաբնակչությունը կրկին օրվա ընթացքում ունենալու է չնչին քանակությամբ խմելու ջուր՝ ջրի հսկայծավալ հոսակորուստների պատճառով:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ հանրային շահերից է բխում նաև վերոնշյալ չափաբաժիններով շինարարական աշխատանքների մեկնարկը՝ հաշվի առնելով ներկա եղանակային բարենպաստ պայմանները ու աշխատանքների չմեկնարկման պարագայում հատկացված գումարների հետ վերադարձի հնարավորությունը պետական բյուջե: Ավելին, հարկ է նշել, որ «Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ-ն («Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ և «Ուրբան Դեվելոփմենթ» ՍՊԸ կոնսորցիում) իր կողմից ներկայացված հայտի գնային առաջարկով հաղթող տեղ չի զբաղեցրել ո՛չ 2-րդ չափաբաժնով, ո՛չ 3-րդ չափաբաժնով, ո՛չ 4-րդ չափաբաժնով, հետևաբար անգամ հայցի հավանական բավարարման դեպքում՝ վերջինս աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու իրավունք ձեռք չի բերելու:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է թիվ ԵԴ2/11628/02/25 քաղաքացիական գործով գնման գործընթացի կասեցումը վերացնել:

Դատարանը, քննարկելով ներկայացված միջնորդությունն, արձանագրում է հետևյալը՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6–րդ հոդվածի 5-րդ մասի հաաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ

մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Վերը նշված իրավանորմերից հետևում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը լիազորված մարմինն անհապաղ **հրապարակում է** «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը, իսկ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների՝ բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների, բողոքարկումն **ինքնաբերաբար կասեցնում է** գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը **հրապարակվելու** օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը: Միաժամանակ այն դեպքում, երբ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահից ելնելով՝ անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, ապա Դատարանը կողմի գրավոր միջնորդության հիման վրա, կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

Անդրադառնալով համաչափության պահանջին, այլ կերպ ասած՝ այն հարցին, թե արդյո՞ք նշված սահմանափակումը պիտանի և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը,

արձանագրել է, որ համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել պետության միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի: Ըստ այդմ, համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից՝ պիտանիություն, անհրաժեշտություն և չափավորություն: Այսինքն՝ գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Համաչափության սկզբունքի այն պահանջը, համաձայն որի՝ հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ իր հայեցողությանը վերապահված միջոցներից պետությունը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար առավել անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որը առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս առավելագույնս հասնել հետապնդվող նպատակին: Չափավորությունը ենթադրում է, որ անհրաժեշտ և պիտանի միջոցը միևնույն ժամանակ պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս, Միեր Ավետիսյանը և մյուսներն ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.11.2015 թվականի որոշում):

Տվյալ դեպքում Դատարանն արձանագրում է, որ թիվ «ՁԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով հրատապ բաց մրցույթը հայտարարվել է Ջրային կոմիտեի կողմից, որի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով առաջարկվելու է կնքել ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքների կատարման պայմանագիր:

Բացի այդ, Դատարանը թիվ «ՁԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է նաև, որ տվյալ գնման գործընթացի շրջանակներում իրականացվելու են հետևյալ աշխատանքները՝

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Նուբարաշեն թաղամասի ջրամատակարարման I գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և գոտիավորման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Նուբարաշեն թաղամասի ջրամատակարարման II գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և գոտիավորման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Նուբարաշեն թաղամասի ջրամատակարարման III գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և գոտիավորման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Նուբարաշեն թաղամասի ջրամատակարարման IV գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման և գոտիավորման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների, Պարսեղով, Եղիազարյան և հարակից փողոցների ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ջանիբեկյան, Բաշինջաղյան, Միսակյան, Վշտունի և հարակից փողոցների ջրագծերի վերակառուցման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջան Մարտիրոսյան, Սարգսյան և հարակից փողոցների ջրամատակարարման բաշխիչ ցանցի բարելավում
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Պռոշյան-Դեղրճյան-Բաղրամյան փողոցներով պարփակված հատվածի բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքներ (Կոնդ-1)
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Կոնդ թաղամասի և Պարոնյան, Ջորափի փողոցների բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքներ (Կոնդ-2)
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-ՀՀ Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Աստղիկ ԲԿ-ին հարակից տարածքի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-ՀՀ Լոռու մարզի ք. Ալավերդի Սարահարթ թաղամասի բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ակնալիճ գյուղի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ-Աշտարակ քաղաքի Մ. Մաշտոցի, Լինչի, Հ. Թումանյան, Թամազյան, Գրիբոյեդովի փողոցների և հարակից նրբանցքների ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում

Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշատանքներն ունեն կենսական նշանակություն բնակչության առօրյա կյանքի համար: Բացի այդ, տվյալ աշխատանքների ուշ սկսելը կհանգեցնի ջրամատակարարման խողովակաշարերի վիճակի ավելի վատթարացման, որպիսի իրողությունը չի բխի հանրային շահերից:

Բացի այդ, Դատարանն արձանագրում է, որ մինչև սույն գործի քննությունն ավարտվի և առկա լինի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ (դատական ակտի բողոքարկման և քննության ժամկետները ներառյալ), արդեն իսկ եղանակային պայմանները կլինեն անբարենպաստ և անհնար կլինի ջրամատակարարման խողովակաշարերի աշխատանքներ իրականացնելն, ինչը նույնպես չի բխի հանրային շահերից:

Ավելին, Դատարանը, նկատի ունենալով ջրամատակարարման պատշաճ իրականացման կենսական նշանակությունն, արձանագրում է, որ թիվ «ՋԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով գնման գործընթացի առարկան հանդիսացող ջրամատակարարման խողովակաշարերի աշխատանքների հետաձգումը չի բխի հանրային՝ ամբողջ հասարակության կամ հասարակության ծանրակշիռ հատվածի շահերից, հետևաբար միջնորդությամբ խնդրարկվող՝ գնման գործընթացի՝ օրենքի ուժով առաջացրած կասեցումը վերացնելու պահանջը պիտանի, անհրաժեշտ և չափավոր է հանրային շահերի տեսանկյունից, հետևաբար գնման գործընթացը շարունակելու անհրաժեշտությունը բխում է հանրային շահերից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի փաստարկները հիմնավոր են, ուստի քննարկվող պարագայում հանրային շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը:

Ինչ վերաբերում է միջնորդությամբ վկայակոչված այն փաստարկին, որ *<u>Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական բյուջեից տրամադրել է ավելի քան 4.600.000.000 ՀՀ դրամ վերոնշյալ աշխատանքների</u>*

<u>իրականացման համար և աշխատանքների չմեկնարկման պարագայում հատկացված գումարներն ենթակա կլինեն վերադարձման պետական բյուջե,</u> ապա Դատարանն արձանագրում է, որ գործի նյութերում բացակայում է պետական բյուջեից գումար հատկացված լինելու վերաբերյալ հիմնավորումները, հետևաբար այդ գումարի օգտագործման նպատակների և սահմանված ժամկետում այն չօգտագործվելու պարագայում պետական բյուջե վերադարձման ենթակա լինելու հանգամանքների մասով հնարավոր չէ վերացական դատողությունների հիման վրա աներկբա եզրահանգումներ կատարել:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից 12.11.2025 թվականին ներկայացված՝ թիվ «ՁԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.11-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի միջնորդությունը բավարարել:

2. Վերացնել թիվ «ՁԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով գնման գործընթացի՝ օրենքի ուժով առաջացած կասեցումը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով <u>"Էլեկտրոնային դատավարություն"</u> համակարգ՝ <u>cabinet.armlex.am</u>